Կրօնաւորեալի անիրաւացի «երկատման», անգամ՝ «եռատման» հետեւանքով (օր.՝ Բ. Ուլուբաբեանի մօտ):

Իրօք, հակառակ ԺԸ.-ԺԹ. դդ. պատկերացումների՝[115] *Ջաքարէ եւ Իւանէ ամիրսպասալարների քոյր Դօփ իշխանուհու ամուսինը եղել է ոչ թէ Հասան Մեծի որդի Ղարա-Գրիգորը, այլ Հասան անունով իշխանը, քանի որ նրանց որդին մի փրկագնուած եւ 1244 թ. Խադարավանքին նուիրաբերուած Աւետարանի վերջում յիշատակագրել է. «...եւ գհեծելազաւրս ընդ ինքեանս տանէին՝ ուր եւ երթային* [իմա՛ *մոնղոլները*], *ընդ որս եւ գրաւեցայ ես՝* Գրիգոր, *որդի* Հասանայ *եւ* Դօփին, *քուեռորդի սպարապետացն Հայոց եւ Վրաց Զաքարիայի եւ Իւանէի»*[116]*: Ստեփաննոս Օրբէլեանը եւս Տարսայիճի ու Մինախաթունի դուստր Ասփա իշխանուհու առիթով գրում է. «Ետ ի կնութիւն մեծի եւ փառաւորեալ իշխանին Խաչենոյ* [իմա՛ արդէն միաւորուած Վերին Խաչէնի եւ Ծարի] *Գրիգորոյ* [1287-1317 թթ.]՝ *որդւոյ Հասանայ, որդւոյ* Մեծի Գրիգորին, *որ էր* քեռորդի *աթաբեկ Իւանէի»*[117]*: Անկասկած, նոյն «Մեծ» Գրիգորն է նաեւ Դադիվանքի Կաթողիկէի արեւմտեան պատի հարաւային մասում 1224 թ. փորագրել տուել այն 13 տողանոց նուիրատուական արձանագրութիւնը, որում առաջին անգամ յիշատակւում է Դադի առաքեալի գերեզմանը*[118]*. «Անուամբն Աստուծոյ, ես՝* Գրիգոր, որդի Հասանա, *որ մեծ յուսով տուի ի Դադի գերեզմանս :Դ: տուն շինակ[ան] վ^ա^ս^ն^ հոգո իմո յառաջնորդութե^ան^ն տ^եառ^ն Գրիգորիսի...*[119]*: Արդ, ով խափանի յառաջնորդաց զիմ ժամն, կամ* յաւագաց յիմոց *կամ յաւտարաց՝ զչինական յետ առնլով... մասն նորա ընդ Յուդայի եղիցի. :ՈՀԳ:* [=1224 թ.]»[120]*: Մեր ընդգծած «յաւագաց յիմոց [ով խափանի]» արտայայտութիւնը, կարծես թէ, ուղղակի ձեւով ցոյց է տալիս պատուիրատուի՝ բաւական երիտասարդ լինե-*

---

115 Օր.՝ **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 195. **Կարապետ եպիսկոպոս**, *Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք*, էջ 49:

116 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար*, էջ 228: Հմմտ. **Գ. կաթ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պռօշեանք հայոց պատմութեան մէջ*, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 20. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 154-155: Կիրակոս պատմիչը երկիցս յիշատակում է այս Գրիգորին մոնղոլների արշաւանքներին մասնակից հայ իշխանների թւում. տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. ԼԴ, էջ 180 («եւ *Գրիգոր* Խաչենեցի՝ Դօփին որդի, որ էր այր երկիւղած ի Տեառնէ»), գլ. ԼԵ, էջ 184 («եւ խաչենեցիքն՝ Ջալալն Հասան եւ զօրք իւր եւ ազգականքն, եւ *Գրիգոր*՝ Դօփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին... Եւ այս եղեւ ի ՈՂԲ թուականին Հայոց *[=1243 թ.]*»):

117 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. 66, էջ 311:

118 *Թադէոս* առաքեալի անունը դարեր ի վեր կրած վանքի անուան տեղական հնչողութեան (*Դադէի* վանք) հիման վրայ ԺԳ դ. առաջին կէսին *Դադի* առաքեալի (իբրեւ եօթանասնից մէկի) առասպելի ձեւաւորման մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ*, էջ 272-273: Հնարաւոր է նկատել նաեւ նոյն շրջանում Գանձասարի համար Յովհաննէս Մկրտչի մասունքի (գլխի) հայթայթման վանական առասպելի ձեւաւորումը եւ այդ ամենը կապել երկու հզօրացող վանքերի ու նրանց աշխարհիկ հովանաւորների միջեւ մի իւրօրինակ մրցման հետ:

119 Տէր Գրիգորիսը Հասան Մեծի թոռն էր, քանի որ մի քանի վիմագրում կոչուած է «որդի նահատակին Վասակայ» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 200, N 710, էջ 210, N 739, 740. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 112, N 28, էջ 116, N 61, 63. միւսներում կոչուած է լոկ Տէր Գրիգորիս. *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 119-120, N 709, էջ 201, N 711, էջ 202, N 714, էջ 204, N 718. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 111, N 15, էջ 111-112, N 16, էջ 112, N 26, 29): Այս պաշտօնում նրա նախորդներից յայտնի են Հասան Մեծի եղբայր Գրիգորէսը եւ որդի Գրիգորը, բայց ցուցակը, գուցէ, դրանով չի սպառւում:

120 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 201 (N 711). **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 112 (N 29): Հմմտ. **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 13, ծնթ. 13: